

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի  
հարցաշարեր  
(2023-2024 ուստարի)

XI դասարան  
(Տևողությունը՝ 180 րոպե)

«Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի  
բովանդակությունը»: Հովհաննես Թումանյան

1. Վերլուծի՛ր Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը՝  
անդրադառնալով ստեղծման պատմությանը: Ինչպե՞ս էս մեկնաբանում  
«ագահ սիրտը լափեցին», «սև աչքերը հանեցին» տողերի իմաստը. ինչո՞ւ  
սիրտն ու աչքերը: Գրի՛ր համապատասխան քառատողը:

5 միավոր

2. Ո՞վ է Սիամանթոն (գրի՛ր կեղծանվան պատմությունը): Ի՞նչ  
ժողովածուներ ունի. մեկնաբանի՛ր՝ «Ով մարդկային արդարություն, թող  
ես թքնեմ քո ճակատիդ»: Ո՞ր բանաստեղծությունից է և ո՞րն է պոռթկումի  
պատճառը:

5 միավոր

3. Ավետիք Բսահակյանի հայրենասիրական քնարը. ո՞րն է Բսահակյանի  
հոգու հայրենիքը: Գրի՛ր առնվազն 3 բանաստեղծության վերնագիր և  
վերլուծի՛ր դրանցից որևէ մեկը: Շրջասույթ Բսահակյանի մասին:

5 միավոր

4. Ո՞վ է հայ գրականության գրական ֆիդային. ինչո՞ւ է այդպիսի  
շրջասույթով բնութագրվում: Վերլուծի՛ր որևէ բանաստեղծություն, որ  
համահունչ լինի «ցեղի փողհար» շրջասույթին:

5 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան